



# Զինվորից գեներալ դանապարհը

ՀՈԲԵԼՅԱՆ

Նրա ծննդավայրը Կապանի շրջանի Ներքին Խոտանան գյուղն է՝ սարալանջին թիկնած, խիստ անտառներով շրջապատված, հարավային մասով հոսող Օխտար վտակով։ Նրա տոհմածառը սկիզբ է առնում դեռևս 1700-ականներին Սիրիայից Դայաստան տեղափոխված Տեր Դավիթ ընտանիքից։ Մուրազ Սարգսյանը հապատությամբ է հիշում իր պապերի, նրանց արժանավոր արարքների մասին։ Յորը գոեթե չի հիշում. ավագ որդու հետքերով նա մեզնում է ռազմաճակատ ու այլեւս չի վերադառնում (զոհվել է Սոգոնի մոտակայքում տեղի ունեցած ծանր ճակատամարտերից մեջի ժամանակ)։ Բայց մայրը չէր ուզում հավատապ դրան. անբողոք կյանքում սպասել է ամուսնուն եւ իշխան որդուն։ Խոկ իշխանը, ինչպատ հետապայում հատուկ բոլյլստվությամբ գաղտնի արխիվներից պարզել է գեներալի որդին՝ Աշոտ Սարգսյանը, հելոսաբար զոհվել է 1942թ. Դյուսիսային Կովկասի Թերեք բնակավայրի ուղղությամբ տեղի ունեցած թեժ մարտերից մեջի ժամանակ։ Մայր՝ Մանուչարը, հայ կնոջ եւ նոր տիպիկ կերպար էր՝ աշխատասեր, ազնիվ, բարի։ Գեներալ որդին անհուն գորովանքով ու սիրով է խոսուն մոր մասին։ մայր, որ հանուն զավակների անտեսեց սեփակամ դժբախսությունը, հոգու ցավը, շտկեց մեջքը եւ սատարեց իր զավակներին՝ դառնալով նրանց համար եւ հայր, եւ մայր։

Սուլրազ Սարգսյանը վերջին մի քանի տարվա ընթացքում ծերանա-  
մուխ եղավ մի կարեւոր եւ մնայուն  
գործի. թթին հանձնեց իր ապրաժ  
կյանքի հուշերը երեք գրքով՝ «Դժվա-  
րին մանկություն», «Անձնուրաց  
ծառայություն» եւ «Ծառայությունն  
ուրաստեղծ հայկական բանակում  
1992 թվականից»: «Դժվարին ման-  
կություն» գրքուն հեղինակը մերկա-



**ՀՀ ՊՆ Նախարարի խորհրդական Մուլազ Սարգսյանը կնոշ՝ Վալյայի հետ**

յանում է իր ծննդավայրը, գերդաստանը, ծնողներին եւ եղայրներին։ Նկարագրում է իր որք ու դժվար մանկությունը (ծնվել է 1943թ. օգոստոսի 1-ին), կիսաքաղց տարիները, մանկական խաղերն ու մանկության սիրելի վայրերը։ Պատահում եր՝ մոր հետ գնում էն հնձած արտուռ հասկ հայրաբերությունը։ ամբողջ օրվա հավաքած հասկից հազիվ մի բուռ ցորեն էր ստացվում։ Այդպիսին եր իր սերմոնի մանկությունը։ Մինչեւ երրորդ դասարանը հաճախել է Ներքին Խոտանակի դպրոցը, այնուհետև ուսումը շարունակել է Ծրվենանց գյուղի միջնակարգ դպրոցում։ Այդ դպրոցի ռուսաց լեզվի ուսուցչուհին՝ Գալինա Բորիսովնան, նկատել է ուսումնատեն պատանուն եւ օրան հորդորել շարունակել ուսումը։ Մուրազ Սարգսյանն այս էլ երախտագիտությանը է հիշում սիրելի ուսուց-

չուիւն: Ամեն անգամ, երբ գալիս էր հայրենի քաղաք, այցելում էր այդ պատվարժան կնոջը՝ իր հարգաճի տուրքը մատուցելու նրան: Զարմանայի հիշորւթյուն ունի գնենարար-այնանի մանամանամեր և հիշում իր մանկությունից, ուստմահությունից, ծառայությունից եւ այնպիսի ոգեւորւթյամբ է պատմում, եւ որքան Վարակիչ է նրա խանճակառությունը:

Ծրբենանցի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո նպատակաւաց պատանին որոշում է զինվորական կրթություն ստանալ, ապացուցել, որ որը ու զրկանքներով մեծացած փոքրանարմին տղան կարող է հրականացնել իր երազանքը եւ գտնել իր տեղը կյանքում: Ամենադժվարը սիրելի մայրիկից եւ հարգաստներից բաժանվելու էր: Երկրորդ գրքում հեղինակը ներակայացնում է զինվորական կրթությունը եւ ծառայու-

թյունը խորհրդային բանակում: 1962-ի թվականից կյանքի մի նոր շղանել սկսվեց կապանցի պատանու համար. իր նման 12 պատանու հետ նաև մեջմունք է մթիլիսի. «Թթիլիսիոն մեգապուրեցին ռազմական ուսումնական նարանի գորանցում, բաշխեցին ըստ դասակաների, իսկ այնուհետև հայտնեցին, թե ինչ քննություններ ենք հանձնելու եւ երբ:

Նիշտան ասած, ուսւերենի ին իմացությունը քիչ թե շատ լավացրել է՝ Կապանի ռուսական դպրոցի դասընթացներին հաճախելով այնպես որ կարող էի հաղորդակցվել: Սակայն նոյնը չէի կարող ասել այդ լեզվով քննություն հանձնելու մասին: Բնական է, որ ֆիզիկա, մաթեմատիկա առարկաների տերմիններանությունը, ուսւերենով թելադրություն գրելով դժվար էին լինելու ոչ միայն հնձ համար, այլև մյուս հայտառների»:

Նպատակիս հասնելու համար  
լրացուցչ էի պարապում, հաս-  
կապես՝ հրետանու կրակի կառա-  
վարման առարկան եւ անգլերենը  
Արածին կուրսի ձմեռային արձա-  
կուրդներին անգամ զյուղ չգնացի-  
նախ՝ փող չունեի, հետո՝ նպատա-  
կասլաց պարապում էի, ավելացնում  
**Ճարտարակությունը՝ Էշ 5**

## Ավագ դպրոցները՝ կայացման փուլում

«Սյունյաց երկրի» հարցերին պատասխանում է Կապանի N2 ավագ դպրոցի տնօրեն Լյուդվիգ Յարությունյանը

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

— Պարո՞ն Հարությունյան, լրացել է Զեր պաշտոնավարման մեկ տարին. փորձեք հաճրագումարի բեռնել մեկ տարվա կատարած աշխատանքները. ի՞նչ հաջողություններ ունեցաք, ի՞նչ բացթողումներ եւ Վիդիպումներ եղան:

- Մեկ տարվա ընթացքում Կապանի N2 ավագ դպրոցում ահագին աշխատանքներ են կատարվել, որոնք նպաստել են դպրոցի աշակերտների հաջողություններին օվինպահաներում, ավարտական եւ միասնական քննություններին: Բարձրացել է աշակերտների եւ մանկավարժական աշխատողների կատարողական կարգապահությունը, աշակերտների հաճախելիության մակարդակը: 2011-12 ուսումնական դասինմանան խնդիրը ավագ եւ հիմնական դպրոց:

Բացքողումների առումով պետք է ասեմ, որ նենք չկարողացանք նամուլով, հեռուստատեսությամբ լուսաբանել մեր գործունեությունը եւ հասարակությանը պատշաճ ներկայացնել ավագ դպրոցի կարեւոր դերը, ուստի հիմնական դպրոցներն ավարտող աշակերտների մի մասը, չունենալով բավարար տեղեկացվածություն, ոիմել է այլ դպրոցներ:

ନୀକ୍ଷାତି ଏ ମହିରାଫାଖ୍ୟାହିନ ଲିଖିମାଧ୍ୟାଜିଃ ଚାରାଧିରାଫଣ୍ୟ ପିଲାଇନାନାକୁଳାନ  
ହୀନାତାପିତ୍ରୟ ଏ ଉନ୍ନତିନାକ୍ଷେତ୍ରରେ 134 ଶ୍ରୋଧନାନାକୁଳାରିତ୍ଥିଃ 95-ୟ, ଉନ୍ନତ ପିଲାଇନ୍ 22  
ଶ୍ରୋଧନାନାକୁଳାରି ଅନ୍ବଦ୍ୱାରା ହିନ୍ଦୁନାନ୍ଦନ୍ତ୍ରରେ  
ଉନ୍ନତିନାକ୍ଷେତ୍ରରେ ଏ ହାନିରାଖେତ୍ରିତ୍ରୟାନ  
ଲାକ୍ଷାଫଣ୍ୟ ରୂପିତ୍ରେ, ପିଲାଇନ୍ହୁ ପେଟ୍ରୋ  
ରେଟ୍ରିକ୍ଯାଲାନ ହାମାଲାସାରାନ: ଲିନ୍ଦନାକ୍ଷେତ୍ର ଏ  
ଲାକ୍ଷାଫଣ୍ୟ ଅଞ୍ଚାକ୍ରେତ୍ରିତ୍ରୟାନ ଅନ୍ବଦ୍ୱାରା ତେ  
ତ୍ରୟାନକ୍ଷିତ୍ରାନାନ ହିନ୍ଦୁନାନ୍ଦନ ଅପାଦ ତେ ହିନ୍ଦୁ  
ନାକ୍ଷେତ୍ରାନ ଧ୍ୟାନଃ:

Բացդողումների առօսնվ պետք է ասեմ, որ մենք չկարողացանք մանուլով, իեռուսատառությանը լուսաբանել մեր գործունեությունը եւ հասարակությանը պատշաճ ներկայացնել ավագ դպրոցի կարեւոր դերը, ուստի հիմնական դպրոցներն ավարտող աշակերտների մի մասը, չունենալով բավարար տեղեկացվածություն, դիմել է այլ դպրոցներ:



րանը, քաղաքաշինության նախարարությունը եւ ԿԳ նախարարությունը:

– Համրության շրջանում հաճախ է քննարկվում նաև ապագա պատմութեան թեման: Ավարտական եւ միասնական քննությունների շտեմարաններն այնքան են բարդացել, որ դիմուղը, առանց կրկնուույցի օգնության, հաճախ չի կարող ընդունվել բուհ. հաճածա՞յն եք դրան, եւ որքանո՞վ է ավագ դպրոցը նպաստում այդ խնդրի լուծմանը, N2 ավագ դպրոցում աշակերտն ունի՞ բուհ ընդունվելու հնարավորություն՝

Inirti

Ն Մեր հայրենակից Ծորս  
Դավթյանը Լեռնային Ղարաբա-  
ղի Յանրապետության նախագահ  
Բակո Սահակյանի հրամանազ-  
րով պարգևեատրվել է «Կաչագան  
Բարեպաշտ» մեդալով: Ծնորհավո-  
րում ենք:

■ Սեպտեմբերի 6-ին Կապան  
էին ժամանել Բուլղարիայի ԶԼԱ-  
ՄԻՒՍՏԱ քաղաքի Սուլը Պահ-  
սի Յիլեննարսկու անվան ավագ  
քայլած աշակերտներ։ Ժամանող

Աղաղողի աշակետսարի: Ծասակող-ների թվում էին նաև ուսուցիչներ: Բուլղարացիներին աղ ու հացով քաղաքի մուտքի մոտ դիմավորեցին Կապանի N2 ավագ լոռողի աշակերտները: Այնուհետեւ քաղաքաբետարանում տեղի ունեցավ «Երիտասարդությունը շարժման մեջ» փոխանակման ծրագրի շնորհանդեսը: Ներկա գտնվողները մեծ ոգեւորությամբ էին ունենորում դեռահասներին, քանզի նրանցից յուրաքանչյուրը տեսանյութերի միջոցով ներկայացնում էր մեր հայրենի բնաշխարհի պատմական վայրերը՝ սկսած Տիգրան Մեծի ժամանակաշրջանից: Բուլղարացի դպրոցականները Կապանում նաև մինչեւ սեպտեմբերի 10-ը: Այդ օրերին Նրանք այցելեցին Կահանավանք, Բաղրամուր, Գորեգին Նժդեհի հուշահամալիր, Իրավանացարին Էկոլոգիկական ակցիա՝ մաքրելով տարածքը: Կազմակերպվեց նաև ծառատունեկ, այցելեցին «Դանիի փրիշս մերաւս Կապան» ՓԲԸ, ծանրացան հանքարդյունաբերական ձեռնարկության աշխատանքներին: Երեխանները Երեւան մեկնելիս նուան Գորիս քաղաքը, այցելեցին Տարեւ, Խճճորեսկի ճոճվող կամուրջ: Սեպտեմբերի 11-ին կապանցի դպրոցականները պատասխան այցով մեկնեցին Բուլղարիա: Նրանք կլինեն Զլատիստա, Սոֆիա, Պլովդիվ քաղաքներում, Զելուպիշի հանքավայրում: Ծրագիրը մոտ 70 տոկոսով հովանավորել է Եվրամիությունը, մնացածը՝ «Արուրի Հանություն»:

առանց կրկնուսույցի մոտ պարապելու:

— Համաձայն չեմ, որ բոլոր շտեմարաններն են բարդացել. կենսաուսումնաբան Ֆեռնանդ Շինինիան

Կրկնուսովցների հերք տարեցուարի կնվազի, և փորձը ցույց է տվել, որ կան աշակերտներ, ովքեր ծրագրային նյութը յուրացնել են առանց կրկնուսովցի օգնության և ստացել են բարձր միավորներ: Ավագ դպրոցի հիմնական խնդիրն է՝ հնարավորություն ստեղծել, որ սովորող աշակերտն ինքնուրույն հաղթահարի ընդունելության շեմը:

— 10-րդ դասարանում ի՞նչ հոսքային դասարաններ են ծնավորվել և ավելի հաճախ ո՞ր հիմնական դպրոցների աշակերտներն են դիմում 10-րդ ավագ դպրոց ընդունվելու համար:

**ତୁ ହାନ୍ଦା:**  
— ଡେଲାକ୍ଷୋପ୍ତୀର୍ବେ ଏହି ହୋଇମାନିଖାତାର,  
ଉନିଟ୍‌ବିଶ୍ୱାସକାଳୀନ, ର୍ବାଧିତୀତାମା-  
ରେନ୍‌ଥିର୍କ୍‌ଲାକ୍‌ଵାନ ତାହାରେ ଉନ୍ନିତ ହୁଣ-  
ଦ୍ୱାରିବିନ୍‌ଦିଲ୍‌ଲାକ୍‌ର ନାମାର୍ଥାନିନ୍‌ଦିଲ୍:  
ଅକ୍ଷାମା ନାମାର୍ଥାନିନ୍‌ଦିଲ୍  
ଉନ୍ନିତିବ୍ୟେତିରେ ହାନ୍ଦାର ହିମନାଲାକ୍‌ବିନ୍‌ଦିଲ୍  
ନିର୍ମାଣ ଏହି NN1, 5, 6, 7, 13 ହିମନାଲାକ୍‌ବିନ୍‌ଦିଲ୍  
ନାମାର୍ଥାନିନ୍‌ଦିଲ୍କୁ ଉଚ୍ଚାକ୍ଷରଣିନ୍‌ଦିଲ୍: ବ୍ୟାକ୍‌ଷାହି  
ତ, ଏହି ଅକ୍ଷାମା ନାମାର୍ଥାନିନ୍‌ଦିଲ୍ ଏହି ନିର୍ମାଣ ଉଚ୍ଚାକ୍ଷରଣିନ୍‌ଦିଲ୍  
ନାମାର୍ଥାନିନ୍‌ଦିଲ୍କୁ ଉଚ୍ଚାକ୍ଷରଣିନ୍‌ଦିଲ୍ରେ  
ଓରିଜିନାଲ୍ ଉତ୍ସବାନିମା ଅକ୍ଷାମା ନାମାର୍ଥାନିନ୍‌ଦିଲ୍  
ଏହି ନିର୍ମାଣ ଆବେଳୀ ଜୀବିତରେ ଉଚ୍ଚାକ୍ଷରଣିନ୍‌ଦିଲ୍  
ନାମାର୍ଥାନିନ୍‌ଦିଲ୍କୁ ଉଚ୍ଚାକ୍ଷରଣିନ୍‌ଦିଲ୍ରେ, ଯୁକ୍ତ  
ମେତ୍ର ମୁଣ୍ଡ ହାଲାଗାକ୍‌ବିନ୍‌ଦିଲ୍ ଏହି ନାମାର୍ଥାନିନ୍‌ଦିଲ୍

# Հացն է ամեն բարիքի սկիզբը

ԱՎԱՆԴՈՒՅԹ

Տննակատարությունների եւ տոնահանդեսի հայկական մշակույթը ունի հազարամյակների ավանդույթ, եւ ընդամենը մոտ հարյուր տարի առաջ դեռ կարելի էր ականատես լինել ավանդական տոնահանդեսի հարուստ ու բազմազան դրսեւորումների: Չեւապորված լինելով երկրագործական-անասնապահական համակցված տնտեսական մշակույթի ավանդույթներով եւ համապատասխանածելով Քայլական Լեռնաշխարհի կիմայական ու սեղոնային առանձնահատկություններին՝ այն մեջ չափով հագեցած էր գյուղատնտեսական պաշտամունքի բազմաբնույթ դրսեւորումներով: Տննակատարությունները հիմնականում ճեւապորվում էին ժամանակի կրոնական պատկերացումների ու հասարակական նորմերի համաձայն, դրոնց փոփոխություններին համընթաց, ընականաբար, փոխվում էին նաև տոների բնույթը, տոնահանդեսը եւ տոնական ծեսերը, մի խոսքով՝ տոնական մշակույթը: Ներկայումս, երբ հանաշխարհային քաղաքակրթության մեջ նկատվում են գլոբալացման երեւույթներ, եւ, կարծեք թե, դուրս են մղվում ազգային պահպանային դժվարանում է դրանց պահպանային գործընթացը:

Ժողովրդական հետաքրքիր տոներից մեկի՝ Հացի տոնի ավանդույթների վերականգնման առաքելությունն արդեն ուր տարի է՝ իրականացնում է Նիկողոսյան Աղոնցի անվան Սիսիանի պատության թանգարանը (տնօրեն՝ Ծովինար Պետրոսյան) «Եվորպական ժառանգության օրենք» ծրագրի շրջանակում։ Օգոստոսի 31-ին կազմակերպված տոնը՝ «Ժառանգությունը ժառանգողներին» խորագրով, թանգարան էր հրավիրել բազում սիսիանցիների եւ այլ վայերերից ժամանած մարդկանց՝ ցանալով նշել դարերով ստեղծված մեր տոնն այնպես, որ դրանից շահեն եւ նշակույթը, եւ ժողովուրդը։ Հացի տոնն սկսվեց Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ տեր Մակար Վարդապետի կողմից անցկացված մատադի օրինության արարողակարգով։ Վերջինս



Եցեց, որ հացը նոյնական թրիստորի չառարանքներն է կրում նախքան հաց դառնալը, այդ է պատճառը, որ այն Աստծոն կողմից սրբություն է համարվել: Նա կոչ արեց գյուղացիներին՝ նախքան ցորեն ցանելը սերմն օրինել, որպեսզի բերեն առատ լինի,

քանզի այստեղ, որտեղ չկա Աստծօնինություն, չի կարող առատություն լինել:

Ողջումի խոսքում Սիսիանի քաղաքապետ Աղասի Հակոբջանը մասնավորապես նշեց. «Ժամանակն է, որ մենք շրջվենք դեպի

մեր արձատները եւ կարողանանք միջոցառումները համատեղ տոնել, արժեւորել դարերից եկող ազգային ավանդույթները՝ դրանք սերմնեսերունդ փոխանցելով։ Երախտագիտությունն են հայունում Սիսիանի պատմության բանագրանի տօնօրեն Ծովինար Պետրոպավլում ու նրա աշխատավազմին՝ տոնն ավանդական դարձնելու համար։» Միջոցառման ընթացքում հացի սեղանների շուրջ չէին տարերկուում մեծ ու փոքր, ահել ու ջահել, պաշտոնյա ու հպատակ. չէ՞ որ հացն ամենքինն է եւ արարվում է բոլորի համար համահավասար։ Թերեւս, այս մտայնությամբ էր տոնին նաև ակցում Սիսիանի քաղաքապետը, ով, սեղանից սեղան անցնելով, հավերժություն ու խաղաղություն էր նադրում մեր ժողովրդին ու երկրին։

Հացի տոնի ամենապատվելի ճաշատեսակի՝ կորկոտ-հարիսայի հաճելի բուրմունքը եւս մեկ անգամ հյուրերին հիշեցրեց հազարամյակների պատմություն ունեցող մեր ժողովրդի՝ հացի նկատմանը ունեցած առանձնահատուկ վերաբերմունքը: Զուռնա-դիոլի հնչյունների ներքո ներկաները ճաշակեցին մատաղը, ավանդական ճաշատեսակները, օրինված գիմին՝ միմյանց բարեմադրանքներ հղելով:

Տոնի սովորույթներից է եղել նաեւ միմյանց նվերներ տալը, հատկապես աղջիկներն իրեւ նվեր ստանում էին հացարխման մեջ կիրառվող գործիքներ, իսկ տղամարդիկ այդ օրը միմյանց խոստանում էին օգնել բռնրի պատր շարել կամ է տաշտ պատրաստել։ Քանի որ ժամանակի հետո փոխվելու է նաեւ նվերի տեսակը՝ շատ հաճախ վերածվելով մեր օրերում այնքան հարգի դարձած պատվոգրերի ու շնորհակալագրերի, ուստի թանգարանի տնօրինը հացի տոնը լավագույն առիթը համարեց՝ իր շնորհակալությունը հայտնելու թանգարանին աջակցություն ցուցաբերած մարդկանց։ Թանգարանի կողմից պատվոգրերի արժանացան Սյունիքի մարզի սերմ արտադրողների միության նախագահ, տոնի հովանավոր Գագիկ Խաչատրյանը, Սյունիքի տարածաշրջանային մաքսատան պետ Աշոտ Մինասյանը, Միսիանի N1 ՆՈՒՀ-ի (նախադպրոցական ուսումնական հաստատություն) տնօրին Նարինեն Գասպարյանը, հասարակական ու մշակութային գործիչ Համիլկ

Ասատրյանը թանգարանի երկարամյա աշխատակից Նորա Սաֆրայանը: Իսկ ամերիկահայ բարերար Պերծ Զոլուսանը, 2012թ. թանգարանին ցուցաբերած Ծվիրատպվորյան համար (1մլն դրամ), արժանացավ շնորհակապարփ՝ ճանաչվելով 2012թ. թանգարանի լավագույն բարեկամ: Վերջինս մասնավորապես նշեց: «Հաստ են կարեւորում հացի տոնը, քանի որ այն, հատկապես հայ ժողովորի համար, ունի մեծ արժեք: Մեր պարտքն է հետագա սերունդ-ներին սովորեցնել հացն արարելու սրբազն գործը, այն ազիտ լույսի պես պահելու եւ պահպանելու խորհուրդը»: Պատվոգրերի ու շնորհակալագրի արժանացած հյուրերը նաեւ փորձիկ հուշանվերներ ստացան թանգարանի կողմից:

ՀՅ մշակույթի նախարարության  
աջակցությամբ թանգարանի ցուցասրահներից մեկում ներկաների ու շաղության էին ներկայացվել զյուղական, հատկապես հացարինան պատկերներով նկարներ, կազմակերպվել էր «Հացին երգը» խորագրով պոեզիայի ժամ Սիսիանի N1 ՆՈՒՅԻ-ի սաների, ինչպես նաև մեծահասակների մասնակցությամբ: Թանգարանի տնօրինի հավաստնամբ. «Հացն է մարդկության ու ընույթին երաշխիքը, որքան հացը նարուուն ու հողին է պատկանում, այնքան մնում է հողեղեն, որքան հացն Աստծոն ուղարկած քարիքն է եւ հարատեսելու, հավերժությունց, այնքան հացը ոգեղեն է: Աստված իմքը որոշեց, որ երկնային մանաճանաւաստվածային կերպակությ, մի որոշ ժամանակ երկիր ուղարկի, իսկ այն օրը, եթե հացը դրվեց սեղամին՝ որպես կերակուր, մարդն այլևս Աստծոն ուղարկած մանաճան չգտավ: Դա ժողովուրդը դարեր ի վեր հացն ընտրել է իրեւ զենք, վտանգի պահին հացը թաքցրել իրեւ գանձ եւ այժմ իր սերունդներին կտակում է մի ամբողջ աշխարհ, որի բնակիչը պիտի հացի պես ուժեղ, հացի պես խոնարի ու հարատես լինի»:

Ցորենշաղիկին՝ որպես առա-  
տության և լիության խորհրդանշիք,  
եկավ հաջորդելու երիտասարդնե-  
րին ցորենի հասկով զարդարված  
կարմիր խնձոր բաժանելու արա-  
րողությունը, քանզի բոլոր տոների  
ամենաօրինիված պահը նոր ընտա-  
ճիք ստեղծելու համար ճանապարհ  
բացելու է...

# Պատմագիրության երիտասարդ պրոֆեսորը

## ՃՆՈՐՅԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ

Գորիսի պետական համալսարանի գիտական խորհրդի 04.06.2013թ. որոշմամբ եւ Հայաստանի Հանրապետության բարձրագույն որակավորման հանձնաժողովի 15.07.2013թ. հասպարմամբ մեր հայրենակից, պատմական գիտությունների դոկտոր Գետրդ Մրապիոնի Սպեֆանյանին շնորհվել է պրոֆեսորի գիտական կոչում պատմագիտություն մասնագիտությամբ:

«Սյունայց Երկիր» թերթի կողմէկտիվը շնորհավորում է Գեւորգ Սահմանյանին եւ ցանկանում պատամանկավարժական հետազարդություն:

Գ.Ստեփանյանը ծնվել է 1966թ. Սիսիան քաղաքում, վաստակաշատ հյուսն Արապին Ստեփանյանի եւ շնորհաջառ խոհարար Արմանուշ Ասրյանի ընտանիքում: Արմաններով Սյունիքի ճահոնկ գավառի Սաղվասոնը գյուղից է: Ստեփանյանների տոհմի ճախապապը 1828թ. Վերանակվել է Սյունիքի Ծողուկ գավառի Լորաձոր կամ Վերին ձոր Ենթագավառի Գետարաջ գյուղում:

1983թ. ավարտել է Սիսիան քա-



Դաքի Արշակ Գրիգորյանի անվան N1  
միջնակարգ դպրոցը: 1986-1988թ.  
ծառայել է խորհրդային բանակում:  
1992թ. ավարտել է Խ.Արույշանի ան-  
վան մանկավարժական ինստիտու-  
տի պատմության եւ աշխարհագրու-  
թյան ֆակուլտետը: 1992-1996թ.  
սովորել է նույն ինստիտուտի ասպի-  
րանտուրայում՝ հայոց պատմություն  
մասնագիտությամբ: 1996թ. պաշտ-  
պանել է թեկնածուական թեզ՝ «Հա-  
յերի կոտորածներն ու ինքնապաշտ-

պանական մարտերը Նուիսի եւ Արեց գավառներում 1918-1920թթ.» թեմայով եւ ստացել պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 2008թ. շնորհվել է դոցենտի գիտական կոչում: 2009թ. պաշտպանել է դոկտորական թեզ՝ «Բարվի նահանգի հայությունը XIX դարի երկրորդ կեսին եւ XX դարի սկզբներին» (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն) թեմայով եւ ստացել պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

Գ.Ստեփանյանի գիտական ուսումնասիրությունների շրջանակ-ներն ընդգրկում են Գանձակ-Ելիզավետպոլի և Բաքվի նահանգներում Թուրքիայի եւ մուսավարական Աղբբեջանի կողմից 1918-1920թթ. իրականացված հայերի ցեղասպանության, հայ բնակչության ինքնապաշտպանական մարտերի, Բաքվի նահանգի հայության ժողովրդագորական, հասարակական-քաղաքական եւ հոգեւոր-ճշակության կյանքի պատմության հարցերը: Նշված թեմաներով հեղինակել է շուրջ 50 գիտական հոդված: Զեկուցումներով պարբերաբար հանդես է եկել հանրապետական եւ միջազգային գիտաժողովներում:

**Գ. Սպեսիալյանի հեղինակած մե-  
նագրություններն են.**

1. «Ծանախու հայոց թեմի Սաղիանի Ստեփանոս Նախավկա վանքի պատմությունը, Երեւան, 2007»:
  2. «Բարձի ճահանգիր հայությունը XIX դարում (պատմաժողովուղագրական ուսումնասիրություն), Երեւան, 2010»:
  3. «Բարու քաղաքի հայության պատմությունը (պատմաժողովուղագրական ուսումնասիրություն), Երեւան, 2011»:
  4. “Armenians of Baku Province in the Second Half of the 19th century (Historical-Demographic Study), Yerevan, 2013”.
  5. «Ծանախի քաղաքի հայերի պատմությունից, Երեւան, 2013»:

**Հրապարակության են պատրաստված հետեւյալ մենագրությունները.**

  1. «Հայերի կոտորածներու ու ինքնապաշտպանական մարտերը Նույին և Արեց զավառներում 1918-1920թթ.»:
  2. «Հիրվանահայոց թեմերի պատմությունը (XII-XVIII դդ.)»:
  3. «Ծանախու հայոց թեմի պատմությունը (XIX-XX դդ.)»:
  4. «Բարձի ճահանգիր հայկական դպրոցները (XIX դ. Երևորդ
  5. «Բարձր քաղաքի հայվագաճ թարողությանը պատմությունը (XIX դ. 70-ական թթ.-XX դ.)»:
  6. «Համազասպ Սրբանձությանց կյանքն ու գործունեությունը»:
  7. «Դրվագներ Գորիս քաղաքի պատմության (1870-1917). մաս Ա»:
  8. Ստեփանյանն աշխատել է Սիմիանի N2 եւ N1 դպրոցներում, եղել է գիտամեթոդական աշխատանքների գօնվ փոխտնօրեն Սիմիանի պետական հումանիտար քղեջում, ապա 2002թ. անցել է դասախոսական աշխատանքի Գորիսի պետական համալսարանում: 2004-2007թթ. եղել է նոյն համալսարանի պատմության ամբիոնի աշխահն ընտրված վարչչը եւ Ստեփանոս Օրբելյանի անվան պատմության կարիքնետի հիմնադիրը: 2008թ. նոյեմբերից աշխատում է ՐԴ ԳԱԱ պատմության ինստիտուտի «Սկիզբանի եւ հայկական գաղթօջախների պատմության» բաժնում՝ ավագ գիտաշխատող: Դասախուում է Երեւանի պետական համալսարանի «Արեւելագիտության» եւ Գորիսի պետական համալսարանի «Պատմության եւ իրավագիտության» ֆակուլտետներում:
  9. Անուսնացած է, ունի Երկու զավակ՝ Սիմիան եւ Սասուն:



# Սյունիքի մշակութային ժառանգությունը

## Ժայռապատկերների փաստագրումը շարունակվում է

**ՍԵՎԱՍԱՐԻ ԺԱՅՈՒԱՎԱՐՔԵՐՆԵՐԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ Մշակութային ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՆԻՐ ՄԱՍ ԵՆ:** ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԱՐԾԱՎԱԽՈՒՄԲԸ ԵՐԿՐՈՐԴ ՎԱՐԻԲՆ Է ԱԺԽԱՎՈՒՄ Է ՍՅՈՒՆԻՔԻ ԲԱՐՁՐԱՎԱՆԴԱԿՈՒՄ, ՎՈՐԴՈՒՄ ԲԱԳՉԱՀԱՎՐԵԼ ՀԱՊԱՐԱՄՅԱԿՆԵՐԻ պատմություն ունեցող ԺԱՅՈՒԱՎԱՐՔԵՐՆԵՐԻ ԳՈՎԱՐՆԻՔԸ ԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՑՆԵԼ դրանք ԱԺԽԱՐԻԲՈՒ: ԺԱՅՈՒԱՎԱՐՔԵՐՆԵՐԻ ԹՎԱԳՐՈՒԹՅԱՆ հետ կապված կարծիքները ՎԱՐԵՔԵՐ ԵՆ: Ըստ գերմանացի մասնագետների՝ դա մեզանից մինչեւ 6 հազ. Վարի առաջ ապրած մարդու պատկերավոր միածնողության դրսեւում է:

Հալեի հանմալսարանի հնագիտության բաժնի ուսանող Բյորն Ֆիզուրն արդեն 2-րդ տարին է՝ Հայաստանի՝ հազարամյակներ առաջ այստեղ ապրած մարդու եւ նրա մշակութային ժառանգության նաև սին պատկերացումներն ամբողջացնում է Սյունիքի բարձրավագնորդական, գերմանական արշավախնդիր կազմում նաև նաև կազմում ժայռապատկերների փաստագրման աշխատանքներին: «Պատկերներն այստեղ ինքնատիպ են, նոտիվները՝ խիստ տարրեր, յուրահատուկ ոճով են արված, – ասում է: – Գերակշռող



սարքի միջոցով: Այստեղ 4 քառ. կմ տարածք է, եւ այդ ողջ տարածքը լի է ժայռապատկերներով», – ասում է: Հաճարակալված՝ պատկերներ պարունակող քարաքեկորները նշվում են նաև քարտեզի վրա: Փորագրությունները՝ այժեր, մոլիլներ, հովազներ, որսի տեսարաններ, լուսանկարահանվում, նաև վերաբերացում են թրի վրա: Պատկերների համարումը կօգնի ավելին իմանալ ուղևնիքան ժայռապատկերային արվեստի եւ այստեղ ապրած մասերը մշտին:

«Սա մշակութային ժառանգության պահպանության ուղղված ծրագիր է, - ասում է Ֆրանցիկա Քենոլլը, - եւ այն ամենը, ինչ տեսնում եք մեր շուրջը, այսինքն՝ ժայռապատկերները, Շայաստանի մշակութային ժառանգության կարեւոր մասն են: Մեր նպաստակն է Եվլուպային հայտնի դարձնել Շայաստանի այս հսկյալական տարրածքը, որն այսքան շատ ժայռապատկերներ ունի եւ բազմաթիվ գրոսաշրջիկմեր կարող է ընդունել»:

ՀԱՅԻ

**Քարայջերն են, բայց կան նաև այլ պատկերներ: Նշտարքրի է աշխատել այս լանդշաֆտում:**

Սյունիքի ժայռապատկերների յուրահատուկությունն այն է, որ դրանք փոփած են 2500-3500 մ բարձություններում և ձգվում են կիլոմետրեր: Դայ-գերնանական արշավախումբն այս տարի աշխատում է Սեպասարին հարող տարածքում: Այստեղ փաստագրվել է ժայռապատկերներ պարունակող 1000 քարերեկոր 4500 պատկերով: Իսկ դա, ինչպես ծովագիր ղեկավար Ֆրանցիսկա Քընոլլն է նշում, աշխարհում ժայռապատկերների ամենամեծ քառամերհանքն է:

Նախորդ տարի փաստագրվել է Նազելի հրաբխային խառնարանի մոտակայքի փրոպրություններ պարունակող եւս 600 քարաբեկոր:

Ի դեպ, գերմանացի հնագետների կարծիքով՝ Սեպասարի եւ Նազելի հրաբխային խառնարանի տարածքների ժայռապատկերները պահանջանաւուն առաջարկ են առաջարկության գործության համար:

Ծրագրի դեկապար Ֆրանցիկսկա քնոլլը ցույց է տալիս այն քարտեզը, որով առաջնորդվում են արշավակինդի անդամները: «Սա մենք նԱսանահամեմեն ենք իսպանկ եքոն»

Դեսպանը նաեւ Ակատել էր՝  
որոշ պատկերներ բաց երկնքի տակ  
ժամանակի ընթացքում բայց յայ-  
վում, ոչչանում են, հետեւաբար  
ժայռապատկերների միջոցով մեզ  
փոխանցված ինֆորմացիան չկորց-  
նելու համար ավելի է կարեւորվում

ქასთადონან აჯანთანები:  
შრაფებინ ჩრაკანანავყის ტ ჯ  
ძალისამართ ნახარაოთებან ს ჯ  
დაც ჩნაგამისოთებან ს ადგაფოთ-  
ებან ჩნასთხოთსა ჩეთ ჩამაგორ-  
ძალისამართ: პრენ თუ ადგაფის ტ  
«ზანაგამისოთების ზაյასაოთის»  
დრე 2-ის ჩათორი: ყაფრბჲ ჩნასთხ-  
ოთსა აქ კავე, როსთ ცნებრკავა-  
ც სულმები და ეროვალის ცნებრები  
მასის იღ თებრებრკავის ტის: ტ  
საკ ცერზაკან არეუნის ტ ცნებ-  
რ სულმები და ეროვალის ცნებრები  
რომეს ხავს ჩრაგორძან, ვით-  
სეციო- ჩამაგორძან მა-  
კლისოთებან და ეროვალის ცნებრები  
რ ცნებრები:

## **Սպեհծվում է կենսոլորդային համալիր**

ԲՆԱՊԱՐՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Ակիզբը՝ էջ 1

«Ծիկահողի» պետական արգելոց եւ Արեւիկ» ազգային պարկի տնօրինելու Ռուբեն Սկովշյանին եւ Սուրենիկ Հովհաննիսյանին, ինչպես նաև «Խուլսուլիք» բնապահպանական հասարակական կազմակերպության նախագահ Վլատիկ Մարտիրոսյանին: «Սյունյաց Երկիր» թերթին «Արեւիկ» ազգային պարկի տնօրեն Սուրենիկ Հովհաննիսյանը փոխանցեց, որ այդ նախանձը պաշտոնական գրություն չի ստացել եւ տեղին չի անառեց արգելոց եւ ազգային պարկի միավորնան մասին խոսել:

ԱՐԵՎԻԿԱ ՄԿՐՏՅԱՆ

## «Շիկահողի» պետական արգելոցի դնօրեն


Տեղյակ եմ նճան ծրագիր, ըստ  
որի «Ծիկահող» պետական արգելու<sup>1</sup>  
լոցի և «Արեւիկ» ազգային պարկի  
միաձուվածքով ստեղծվելու է «Զանգեց  
գուր կենտրոնացնելու համալիր»՝ որը  
առեւտրային կազմակերպություն  
նը՝ դրանում ներառելով «Արեւիկ»  
ազգային պարկը, «Ծիկահողի» պե-  
տական արգելոցը, «Սփոս պուրակ»  
«Զանգեզուր»՝, «Բողաքար» և «Սե-  
լին» պետական արգելավայրերը  
Ինձ հաճար այնքան էլ հստակ չէ, թե  
այս բոլորը միասին ինչպես այխու-

գոնե այս պահին անհավանալի է, թե ինչպիսին պիտի լինի այդ տարածքների միավորումը որպես «Զանգեզուր կենալորտային համալիր»: Այդ միավորման մասին դրական կարծիք էմճ կարող հայտնել:

ՎԼԱԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

## **«Խուսդուխ» բնապահանական ՀԿ նախագահ**

Հայաստանի հարավում «Զանգեզուր կենսոլորտային համալրի» ստեղծումը 2000 թվականից ի վեր արծարծվող թենա է, եւ այդպիսի հատուկ պահպանվող վայրերն աշխարհում ընդունված են: Բայց այս դեպքում խնդիրն այն է, որ միանում են ոչ միայն «Ծիծառող» պետական արգելոցը եւ «Արեւիկ» ազգային պարկը, այլև Սյունիքի հարավում գտնվող բոլոր հատուկ պահպանվող տարածքները՝ «Սեւ լճից» մինչև «Արեւիկ» ազգային պարկը: Այս միավորումը, ըստ իս, երկար կյանք չի ունենալու: Որոշ ժամանակ հետո նորից անջատվելու են: Դրա նախադեպը եղել է 1960-ականներին, երբ Գորիսի, Ղափանի, Մեղրու անտառնետեսությունները գրիշ մի հարվածով միացրեցին իրար, հնչը երկար կյանք չունեցավ: Պիտի նշեմ, որ անտառային պահպանությունն այն բնագավառն է, որ ամենօրյա հսկողության կարիք ունի: Նորաս-



գոյատեւեն որպես «Զանգեզոր կենսագործություն համալիր»: Կողմանակից են այն բանին, որ հասարակական լսումներ կազմակերպվեն, եթե դրա

თხელი კავილები თნიშნული არ არის, მაგრა მათ დასახურის გადასახურების დროს მათ დასახური მარტინ ლიპსის მიერ დასახურებული იყო.

Ինձ թվում է, որ ավելի նպատակահարմար կլինի «Զանգեզուր» արգելավայրը միացնել «Արեւիկ» ազգային պարկին՝ Մեղրու տարածաշրջանը քաջարանի ծորով դարձնել մի տնտեսություն, իսկ նոր ստեղծվող «Խոստուիք» արգելավայրը միացնել «Շիկահողի» արգելոցին: «Սեւ լճի» մասին ոժվարանում են ասել: Դուք պատկերացնո՞ւմ եք, նոր ստեղծվող համալիրի տնօրենը որպեսզի հսկողություն իրականացնի, մի ոտքը Մեղրիում պիտի լինի, մի ոտքը՝ «Սեւ լճում»: Հատուկ պահպանվող տարածքներն ամենօրյա հսկողության կարիք ունեն: Այդ մեխանիզմը չի աշխատելու: Խիստ բացասական են վերաբերվում նման խոշորացմանը:

**ԱՆԱԿՎԵՏԻՍՅԱՆ** ստեղծման աշխատանքներին:  
Ինձ համար, նորից եմ կրկնում







